կամ Հիրեկայ վանք»-ը[25], որի «հանդեպ» Բաֆֆին հիշատակում է «մի այլ ամրոց»[26]։ Տեղագիրների նկարագրած այս տեղանքի նույնությունը «Հերքան-բերդ»-ի գտնվելու վայրի հետ բավականին հավանական է թվում ոչ միայն տեղանունների արտաքին նմանության պատճառով[27], որը կարող է և խաբուսիկ լինել, այլև Մխիթար Գոշի հիշատակած Կաթողիկոսաց քար ամրոցի տեղորոշումով Հոռեկայ վանքի մերձակայքում։ Բ. Ուլուբաբյանի ենթադրությամբ, Կաթողիկոսաց քարը «այժմ Կաթողիկոսասար կոչվող վայրն է Թարթառի ափին, Մարտակերտի շրջանի Լյուլասաղ գյուղի մոտ»[28]։ Ընդհանուր առմամբ միանգամայն ճիշտ համարելով առաջարկվող նույնացումը, կարծում ենք բուն ամրոցը կարելի է տեղորոշել այդ տեղանքում գտնվող այն քարայրի վայրում, որը, ըստ Մակար Բարխուդարյանի, կրում է «Կթղուկոսարան» անունը[29]։ Այսպիսով, նաև այս տեղանունների ակներև կապի հավաստումը վստահություն է ներշնչում ենթադրելու, որ Հերդ գավառը ԺԲ—ԺԵ դարերում ընդգրկում էր հետագայի Ջրաբերդի և Գյուլիստանի (Թալիշի) մելիքությունների սահմանային գոտին, արևելքում տարածվելով մինչև Թարթառ (Տրտու) գետի ստորին հոսքը ու ներառելով նաև Պարտավ քաղաքը։ Այն տպավորությունն է ստացվում, որ, չնայած Ջրաբերդի ու Հերդ (Հերքան) բերդի մերձավորությանը, այդ երկու ամրոցները տարբեր գավառների կենտրոններ էին և նրանց հիմնական տարածքները սահմանակցվելով Թարթառի միջին հոսքում՝ ծավալվում էին հակադիր ուղղություններով։ Ցավոք, առկա աղբյուրների հիման վրա, հատկապես քաղաքական հարափոփոխ իրադրությունը նկատի ունենալով, Հերդ գավառի և Հերդ (Հերքան) բերդի առավել ճշգրիտ տեղորոշում դժվար է առաջարկել։

Ուշագրավ է նաև Հերդ գավառի ու Հերք (Հերքան) բերդի պատմական ճակատագրի հարցը ԺԲ—ԺԳ դարերում։ «Աղվանից ժամանակագրությունից» երևում է, որ ԺԲ դարի 40-ական թթ. Հերքան-բերդը պատկանում էր ժամանակի թուրքմեն իշխանավորներից Աղաղին (Իզ ադ-Դի՞ն), որն ամուսնացել էր Գանձակի կառավարիչ Ռավադիի քրոջ հետ։ Բերդը և հարակից տարածքը, հավանաբար, շարունակում էր մնալ օտարների տիրապետության ներքո մինչև ԺԳ դարի երկրորդ տասնամյակը, երբ թյուրքերից Սյունիքի, Ուտիքի, Արցախի ազատագրումը նոր թափ ստացավ։ Ցավոք, հենց այս տարածքների ազատագրման ժամանակագրությունն ամենից ավելի թերին ու պակասավորն է, ուստի դժվար է ասել, ե՞րբ էին մաքրել թշնամուց Հերք (Հերքան) բերդն ու շրջակա տարածքը Զաքարյանները, որի մասին պատմում է Ստեփանոս Օրբելյանը։ Ճիշտ է, «ի ձեռս մեր» տրված տարածքների թվում Իվանե աթաբեկը Հաղարծնի արձանագրությունում, գրված Զաքարե ամիրսպասալարի մահվանից (1112 թ.) քիչ անց[30], հիշատակում է և Պարտավը, սակայն այդ վիմագիր հուշարձանում հիշվում են նաև քաղաքներ, որոնք

---

25 Նույն տեղում, էջ 228—229։

26 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964, էջ 163։

27 Հերքան-Հերդա-Հիրեկայ-Հոռեկայ անցումները հնարավոր կլինի պարզաբանել, թերևս, բարբառային նյութերի հիման վրա։

28 Տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 116։

29 Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 225։ Թվում է, որ բերդանվան մեջ «քար» բաղադրիչի առկայությունը ցույց է տալիս, որ ամրոցը կառուցվել էր քարայրի շրջակայքում կամ քարայրը ևս մտնում էր պաշտպանական համալիրի մեջ։ Հատկանշական է, որ Կիրակոս Գանձակեցին աղվանից կաթողիկոսների ժամանակավոր կայանը անվանում է «քարայր», իսկ մի քանի էջ հետո՝ «քար» (Կիրակոս Գանձակեցի, էջ 178, 182)։ Հետաքրքրական է նաև, որ ան-Նասավին ևս նկարագրում է բերդ, որը իրենից ներկայացրել է բարձր ժայռի մեջ գտնվող քարայր, այդտեղ գտնվող աղբյուրով ու ջրաղացով, տե՛ս ан-Насави, նշվ. աշխ., էջ 274—275։

30 «Դիվան հայ վիմագրության», էջ 24։